

ՍԱՂՄՈՍ 65

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Աստծո առատ շնորհքը երկրի և մարդկանց վրա	Փառք Աստծուն Իր փրկության և հոգածության համար	Գոհություն լավ հունձքի համար	Փառաբանություն և գոհություն	Գոհության երգ
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի Սաղմոսն ու երգը				
65:1-4	65:1-3 65:4	65:1-4	65:1-4	65:1-2ա 65:2բ-3 65:4
65:5-8	65:5-8	65:5-8	65:5-8	65:5 65:6-7բ 65:7գ-8
65:9-13	65:9-10 65:11-13	65:9-13	65:9-13	65:9ա-դ 65:9ե-13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՅԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԵՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս Սաղմոսն ունի տիեզերական շեշտադրություն (տես՝ Սաղմ. 65:2,5,8), քանի որ այն գործ ունի Աստծո ստեղծագործության հետ:

Բ. Աստծո նպատակը այս մոլորակի համար առատությունն ու առողջություն էր (տես՝ Ծննդոց 1-2, Ղևտացիների 26, 2 Օրինաց 28-30), սակայն մարդկությունը ապաստամբեց (տես՝ Ծննդոց 3) և շարունակում է ապաստամբել (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27), որն ունի թե՛ հոգևոր և թե՛ ֆիզիկական հետևանքներ (տես՝ Հռոմ. 8:18-25):

Գ. Այս Սաղմոսը հիշեցնում է մեզ առատության սկզբնական նպատակների մասին (տես՝ Սաղմ. 65:9-13), որն այժմ վերականգնման նոր դարաշրջանի հույսն է (տես՝ Հովել 4:18, Ամովս 9:13): Այս նոր դարը օրհնելու է ամբողջ երկիրը:

Դ. Նկատե՛ք, որ չկան ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ (միայն ԸՂՁԱԿԱՆՆԵՐ են, Սաղմ. 65:4): Այս Սաղմոսը աղոթքի խնդրանք չէ, այլ Աստծո գործերն իր շնորհքով ու հոգածությամբ հաստատելու խոսքեր: Նա ամբողջ երկրի վրա երկրպագուներ է փնտրում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 65:1-4

¹Քեզ փառաբանություն է սպասում Սիրոնում, ո՛վ Աստված,

Ու Քեզ խոստացված ուխտերը կատարվելու են:

²Ո՛վ աղոթքի լսող, դեպի Քեզ է գալու ամեն մի մարմին:

³Անօրենությունները ծանրացան վրաս,

Իսկ մեր հանցանքները, Դ՛ու ես քավելու դրանք:

⁴Օրհնյալ է այն մարդը, ում Դ՛ու ընտրում ես ու Քեզ ես մոտեցնում,

Որպեսզի բնակվի Քո սրահներում:

Բավարարվելու ենք Քո Տան՝ Քո սուրբ տաճարի բարությամբ:

65:1 Սաղմոս 65:1-ում միայն մեկ ԲԱՅ կա (BDB 1022, KB 1532, *Pual* ԱՆԿԱՏԱՐ): Կարծես թե այն կապված է մի քանի երևույթների հետ՝

1. լռություն Քո առջև /հայերենում չկա/ (տես՝ Սաղմ. 62:1,5)
2. փառաբանություն Սիրոնում
3. ուխտերը կատարվելու են (Գոհության պատարագ)

Սա ըստ երևույթին երկրպագության միջավայր է՝ տաճարում (տես՝ Սաղմ. 65:4):

Նկատե՛ք, որ #1 և #2 կարող են լինել մեկ երևույթ: Եթե այդպես է, ապա մարդկության պատասխանատվությունն է փառաբանել Աստծուն և կատարել իր ուխտերը:



NASB

NKJV

NRSV

NJB

JPSOA

REB

LXX

«լռություն Քո առջև»

«փառաբանություն է սպասում Քեզ»

«փառաբանության ես արժանի Դ՛ու»

«փառաբանությունը հիրավի Քոնն է»

«փառաբանություն է վայել Քեզ»

«Քեզ հարիր է փառաբանելը»

«Քեզ օրհնություն է վայել»

MT տալիս է «լռություն» (BDB 189), սակայն UBS Տեքստային Նախագիծը տալիս է նույն բաղաձայնները տարբեր ձայնավորներով (այսինքն՝ «վայել է») բառին «B» գնահատական (որոշ չափով կասկածելի): Շատ անգլերեն թարգմանություններ համախոհ են այս տարբերակի հետ: Սրան են հետևում LXX, Peshitta և Վուլգատտա թարգմանությունները: Սակայն «լռություն» կարող է արտահայտել Աստծո առջև հանցավորության իմաստը (տես՝ Սաղմ. 39:2) և Նրա առջև ակնակալությամբ սպասում (տես՝ Սաղմ. 62:1):

❖ «Սիրոն» Տես՝ Սաղմոս 2:6, 9:11, 20:2-ի գրառումները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՂԵՄ, ՀԵՔՈՒՄ, ԵՐՈՒՄԱՂԵՄ, ՍԻՈՆ

65:2 Ստեղծագործության Աստվածը բնութագրվում է որպես՝

1. Մեկը, որ լուսւմ է – BDB 1033, KB 1570, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ: Կուռքերը չեն կարող տեսնել, լսել կամ շարժվել:
2. Մեկին, դեպի ում ամեն մի մարմին (BDB 142) գալու է (BDB 97, KB 112, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Հակադրություն/լարվածություն կա՝
ա. ամեն մի մարմնի – Սաղմ. 65:2,5,8, 64:9, 66:1,4,8, 67:3-5, 86:9, 145:21, Եսայի 66:23, Հովել 2:28, Չաք. 14:17
բ. և ուխտի ժողովրդի միջև - Սաղմ. 65:3-4 (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ). ՀԿ-յան Աստծո ժողովուրդը դարձել է, բոլոր նրանք, ովքեր հավատում են (տես՝ Հռոմ. 2:28-29, Եփես. 2:11-3:13):

Հետաքրքիր է արդյոք «ամեն մի մարմինը» վերաբերում է՝

1. Աստծո ժողովրդի մեջ ներառված լինելուն (այսինքն՝ ներմամբ փրկությունը)
2. որ դատաստանի Աստվածն է դիմում և կանչում հաշվետվության

65:3 Ստեղծագործության Աստվածը ներում է (այսինքն՝ ծածկում է, BDB 497, KB 493, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 78:38, 79:9, AB սա դիտարկում է որպես ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ /էջ՝ 110/):

1. անօրենությունները (BDB 730)
2. հանցանքները (BDB 833)

«Մեր» ԴԵՐԱՆՈՒՄԸ NASB –ում վերաբերում է Իսրայելին (տես՝ Սաղմ. 65:4): Նկատել, ինչպես է թողությունը կապված ուխտի խոստումների իրականացման հետ: Հնազանդությունը կարևոր է (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 11:13-17, 28-30 գլուխները): Երբ հնազանդությունը ձախողվում է, միակ հույսը Աստծո ողորմությունն է:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՈՒՄԸ ՀԿ-ՈՒՄ
SPECIAL TOPIC: FORGIVENESS IN THE OT**

Ահա երրայերեն գրեթե բոլոր բառերը կամ դարձվածքները, որոնք արտահայտում են մարդու մեղքի և ապստամբության աստվածային ներումը:

1. «Ներել», «թողել», ָוָל – BDB 699, KB 757, տես՝ Ելից 34:9, Ղևտ. 4:20, 26, 31, 35, 5:10, 13, 16, 18, 6:7, 19:22, Թվոց 14:20, 15:25-28, 30:5,8,12, 3 Թագ. 8:30, 34, 36, 39, 50, Սաղմ. 25:11, 103:3, Ես. 55:7, Դան. 9:19, Ամոլս 7:2 (այս տերմինը միշտ կիրառվում է Աստծո համար, երբեք չի կիրառվում մարդկանց համար)
2. «մաքրել», «ջնջել» ָשָׁן (շատ տարածված ԲԱՅ է, տարբեր իմաստներով) – BDB 669, KB 724, տես՝ Ելից 23:21, 32:32, 34:7, Թվոց 14:18, Հեսու 24:19, Սաղմ. 25:18, 32:1,5, 85:2, 99:8, Միքիա 7:18
3. «ծածկել», «քավել» ָפָּ – BDB 497, KB 493, այսինքն՝ շատ տարածված է Ղևտացիներում, Սաղմ. 65:3, 78:38, 79:9, Ես. 6:7, 22:14, Երեմ. 18:23, Եզեկ. 16:63, Դան. 9:24
4. «ջնջել», «լվալ» ָהָרַח – BDB 562, KB 567, տես՝ Նեեմ. 4:5, Սաղմ. 51:1,9, Եսայի 43:25, 44:22, Երեմ. 18:23
5. «բժշկել» ָפָּ – BDB 950, KB 1272, տես՝ 2 Մնաց. 7:14, Սաղմ. 41:4, 103:3, Ես. 6:10, 57:18, Երեմ. 3:22, 17:14, 30:17, Ովսեա 5:13, 14:4
6. «անցնել» ָעָבַר – BDB 716, KB 778, տես՝ Առակ. 19:11, Ամոլս 7:8, 8:2, Միքիա 7:18
7. «լվանալ» ָכַבַּ – BDB 460, KB 459, տես՝ Սաղմ. 51:2,7, Երեմ. 2:22, 4:14
8. «մաքրել» ָהָרַח – BDB 372, KB 369, տես՝ Ղևտ. 16:30, Սաղմ. 51:7, Առակ. 20:9, Եզեկ. 24:13, 36:25
9. «կռնակի ետևը նետել» ָלָשׁ – BDB 1020, KB 1527, տես՝ Ես. 38:17, Միքիա 7:19

10. «գտել» אָט – BDB 306, KB 305, տես՝ Սաղմ. 51:7 (այս տարածված ԲԱՅԻ աստվածային մաքրման նշանակությունը միայն այստեղ է)
11. «Երեսդ ծածկեցիր» רָחַם – BDB 711, KB 771, տես՝ Սաղմ. 51:9
12. «հիշել» (Ժխտ.), זָכַר – BDB 269, KB 269, տես՝ Եսայի 43:25
13. «քայլել» (բառացի՝ «ենթարկել»), שָׁבַח – BDB 461, KB 460, տես՝ Միքիա 7:19:

65:4 «Օրինյալ է» Տես Սաղմոս 1:1 գրառումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

❖ **«ու՛մ Դու ընտրում ես»** Սա վերաբերում է Աստծո կանչին Նահապետներին և նրանց սերունդներին (այսինքն՝ Իսրայելը, տես՝ 2 Օրինաց 4:37, Սաղմ. 33:12): Հրաշալին այն է, որ ակնհայտ կերպով ընտրությունը միայն Իսրայելի վրայից տարածվում է ամբողջ մարդկության վրա (տես՝ Սաղմ. 65:2,5,8): Սա արտացոլում է Ծննդ. 3:15, որը բոլոր մարդկանց համար, ովքեր հավատում և ընդունում են, հաղթանակի աստվածային խոստում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

❖ **«Բավարարվելու ենք Քո տան բարությամբ»** ԲԱՅԸ (BDB 959, KB 1302, *Qal* ԸՂԶԱԿԱՆ) ներկայացնում է մեկին, որը կատարելապես լեցուն է բարությամբ (BDB 375): Այս համարը նկատի ունի ոչ միայն ֆիզիկական առատությունը (տես՝ Սաղմ. 65:9-13), այլ Աստծո հետ մտերմությունը: Նա մեզ Իրենով է լցնում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 65:5-8

⁵Ակնածանք ներշնչող արդար արարքներով ես պատասխանելու մեզ,
 Ո՛վ մեր փրկության Աստված, որ երկրի բոլոր ծայրերի
 Ու հեռավոր ծովի վրա եղողների հույսն ես .
⁶Ով Իր կարողությամբ լեռները հաստատեց՝
 Չորությամբ գոտեպնդված,
⁷Ով հանդարտեցնում է ծովերի ձայնը,
 Նրանց ալիքների ձայնը ու ժողովուրդների փոթորկումը:
⁸Նաև երկրի հեռավոր ծայրերում բնակվողները
 Վախենալու են Քո նշաններից .
 Այգաբացի ու երեկոյի ելքերը որպես ուրախության երգ ես արարում:

65:5-8 Այս պարբերությունը նկարագրում է երկու տարբեր իրավիճակներ:

1. ստեղծագործություն, Սաղմ. 65:6,7,8բ
2. փրկություն, Սաղմ. 65:5,7գ,8ա

Ստեղծագործության նպատակը Աստծո պատկերով ստեղծված մարդու համար վայրն էր (տես՝ Ծննդ. 1:26-27) Աստծո հետ փոխհարաբերության համար (տես՝ Ծննդ. 3:8): Ծննդոց 3-ից հետո այս մտադրությունը դարձավ Աստծո նպատակը փրկելու և վերականգնելու Ադամի և Եվայի բոլոր զավակներին (տես՝ Ծննդ. 3:15):

Սաղմ. 65:6-ում թե՛ «լեռները» և թե՛ Սաղմ. 65:7-ում «փոթորկումը» կարող են վերաբերել մարդկանց, ոչ թե ստեղծագործությանը (տես՝ Երեմ. 51:25): Եթե այդպես է սա կարող է զուգահեռ լինել 2 Օրինաց 32:8-ին:

Նկատել՝ որ Սաղմ. 65:5 նշում է, որ Աստված պատասխանում է, բայց հատուկ աղոթք չի նշվում: Ըստ երևույթին դա եղել է ազատության աղոթք՝

1. անձնական և ազգային մեղքից

2. ազգային թշնամիներից (այսինքն՝ Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոն, տես՝ Սաղմ. 2:1-3)
3. հավանաբար հենց ստեղծագործության մեջ քառուր (Սաղմ. 65:7)

65:5

NASB, NKJV, NRSV

«*փառահեղ գործեր*»

TEV

«*հրաշալի գործեր*»

NJB

«*սքանչելիքներ*»

Այս տերմինը (BDB 431 *Niphal*) գործածվում է Աստծո գործերի համար:

1. Եգիպտոսից իսրայելացիներին ազատելու գործերը – Ելից 34:10, 2 Օրինաց 10:21, Սաղմ. 66:3,5, 106:22
2. ՅԱՀՎԵ Ինքը – Սաղմ. 47:2, 68:35, 76:7, 145:4-7
3. ՅԱՀՎԵԻ անունը – 2 Օրինաց 28:58, Սաղմ. 99:3, 111:9, Մաղ. 1:14
4. ավելի շատ ընդհանուր – Սաղմ. 66:5, 139:14

❖ «**երկրի բոլոր ծայրերի ու հեռավոր ծովի վրա եղողների հույսն ես**» Ինչպիսի հզոր, ներգրավվող սահմանում է: Սա «միաստվածության» տրամաբանական բանաձևն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

❖

NASB, TEV, JPSOA

NKJV

NRSV, NJB

Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 105) BDB –ի կողմից սահմանվում է որպես «վստահության առարկա» (տես՝ Հոր 8:14, Սաղմ. 40:4, 71:5), որն այս համարում ՅԱՀՎԵՆ է, ոչ թե ազգերի սուտ աստվածները (տես՝ «ժողովուրդների փոթորկումը», Սաղմ. 65:7գ, տես՝ Սաղմոս 2):

❖ «**երկրի ծայրերը**» Ինչ հրաշալի արտահայտություն է, որը պարբերաբար կրկնվում է հատկապես Սաղմոսներում և Եսայի գրքում: Այս արտահայտությունը կարող է արձանագրվել երկու ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ, «դեպի» և «. ից»:

1. «դեպի» - ՅԱՀՎԵԻ անձը և գործերը՝
 - ա. վերադարձրու – 2 Օրինաց 30:4
 - բ. դատիր – 1 Թագ. 2:10 (տես՝ Սաղմ. 82:8, 96:13, 98:9)
 - գ. անունը և փառաբանությունը – Սաղմ. 48:10 (տես՝ Եսայի 42:10, Մաղ. 1:11)
 - դ. իշխանությունը – Սաղմ. 59:13
 - ե. հույսը – Սաղմ. 65:5
 - զ. վախը՝ ակնածանքը – Սաղմ. 67:7 (տես՝ Սաղմ. 33:8)
 - է. Բարձրյալը – Սաղմ. 83:18, 97:9
 - ը. փրկությունը – Սաղմ. 98:3 (դարձեք դեպի ՏԵՐԸ, տես՝ Սաղմ. 22:27), Եսայի 49:6, 52:10, 62:11
 - թ. Արարիչը – Եսայի 40:28
 - ժ. Փրկիչը – Եսայի 48:20
 - ի. Մեսիայի թագավորությունը – Սաղմ. 2:6-9, Միքիա 5:4
2. «. ից» - աշխարհը գալիս է դեպի Նա
 - ա. երկրի ծայրերը կհիշեն և կդառնան դեպի ՏԵՐԸ – Սաղմ. 22:27
 - բ. երկրի ծայրերը երգեր կլսեն՝ «Փառք Արդարի» - Եսայի 24:16
 - գ. փրկվեք, երկրի բոլոր ծայրերը – Եսայի 45:22-23
 - դ. ամբողջ երկիրը գալու է Նրա մոտ՝ Սիոն – Եսայի 2:2-5, 60:3, 66:18,23, Երեմ. 16:19

65:7 Այս համարը կարող է վերաբերել՝

1. արարչագործությանը (այսինքն՝ քառսի պարտությունը)
2. կռապաշտության հետ ընդհարմանը (տես՝ Սաղմոս 2, Եսայի 17:12)

65:8 «վախենալու են» Նույն արմատն է ինչ Սաղմ .65:5-ում՝ «սքանչելի գործեր»:

❖ **«Քո նշանները»** Սա վերաբերում է Իր ժողովրդի փրկելու համար գործերին (այսինքն՝ Նահապետների կանչը և պաշտպանությունը, ելիցը և անապատում դեգերելը, նվաճումը, և այլն):

❖ Սաղմոս 65:8-ի վերջին տողը կարող է նկատի ունենալ՝

1. ստեղծագործությունը (այսինքն՝ երեկոն ու առավոտը)
2. աստղերի կայծկտումը (AB)
3. արևելք և արևմուտքը որպես աշխարհագրական ներառական խոսքի պատկեր (NET Աստվածաշունչ)
4. ցերեկվա և գիշերվա փառքը (Թինդեյլ Մեկնաբանության գիրք):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 65:9-13

⁹Այցելում ես երկրին ու ոռոգում ես այն,
Մեծապես հարստացնում ես այն Աստծո գետով,
Որ ջրով լեցուն է. նրանց համար ցորեն ես պատրաստում,
Երբ այդ ձևով հայթայթել ես դրա համար:

¹⁰Առատորեն ոռոգում ես նրա ակունքերը,
Նրա փոսերը շտկում, անձրևներով փափկացնում ես այն .
Օրհնում ես նրա ծլարձակումը:

¹¹Պսակում ես տարին Քո բարությանը
Ու Քո շավիղներից պարարտություն է կաթում:

¹²Դրանք անապատի արոտների վրա են կաթում
Ու փոքրիկ բլուրները ցնծությամբ են համակվում:

¹³Արոտները հոտերով են ծածկված, ու հովիտները՝ ցորենով .
Նրանք ցնծությամբ աղաղակում են ու երգում:

65:9-13 Սա ֆիզիկական առատությունն է, որը բերում է ուխտի հնազանդությունը (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 11:13-17, գլուխ 28): Առատությունը աշխարհին Իր մոտ բերելու ՅԱՀՎԵԻ կերպն է, Իսրայելի համար Իր՝

1. սիրո,
2. հոգածության,
3. մատակարարման շնորհիվ

Նա ընտրեց Իսրայելին, որպեսզի ընտրի բոլորին: Սակայն Իսրայելը հնազանդ չգտնվեց (տես՝ Եզեկ . 36:22-23):

Ուշադրություն դարձրե՛ք «Դուք»-երի թիվը անգլերեն տարբերակներում՝ Սաղմոս 65:9-11-ում (իննը): Ստեղծագործությունը առատությամբ է պատասխանում իրեն Ստեղծողին:

65:9 «Դու այցելում ես երկիրը» Սա ՅԱՀՎԵԻ անձնական ներկայության համար կիրառվող դարձվածք: Ինչ-որ իմաստով Նա մշտապես աշխարհում է: Սակայն այս նկարագրությունը խոսում է հատուկ գալստյան մասին՝ կա՛մ դատաստանի համար, կա՛մ էլ՝ օրհնության: Այստեղ առատ գյուղատնտեսական օրհնությունն է, որը հնարավոր է եղել ջրառատության շնորհիվ:

❖ **«ջրով լեցուն է»** Այս ԲԱՅԸ /հայերենում՝ ԱԾԱԿԱՆ/ (BDB 1003, KB 1448, *Polel* ԱՆԿԱՏԱՐ) հանդիպում է երեք անգամ, այստեղ, որտեղ հաճախ թարգմանվում է «առատ լինել» և Հովել 2:24, 3:13-ում, որտեղ թարգմանվում է «լեցուն հոսել»:

- ❖ «Աստծո վտակը/գետը» Այս արտահայտությունը կարող է նշանակել՝
 1. լեցուն ջրագծի նկարագրություն
 2. երկնքից անձրև (տես՝ Սաղմ. 78:23, Մաղ. 3:10)
 3. Էսկատոլոգիական ակնարկ գետի, որը հոսում է Աստծո գահից (տես՝ Սաղմ. 46:4, Եզեկ. 47:1, Հայտն. 22:1):

65:11

NASB, NKJV
NRSV
TEV
NJB
JPSOA

«Քո շավիղներից պարարտություն է կաթում»
 «Քո գնացքը հաստությամբ լեցուն է ճամփա ընկնում»
 «ուր որ գնում ես՝ առատություն է»
 «հարստությունը հոսում է քո ճանապարհներից»
 «պարարտություն է ծորում Քո շավիղներում»

MT տալիս է «և Քո կառքի հետքերից պարարտություն է ծորում»: Սա ՅԱՀՎԵԻ որոտմունքի ամպերի վրա հեծնելու նկարագրություն է, որոնք անձրև են բերում (տես՝ Սաղմ. 18:7-15): Սա ՀՄԱ-ին կամ հատկապես քանանացիներին բնորոշ *Բահալի*՝ փոթորկի աստծո նկարագրությունն է:

65:12-13 Ֆիզիկական երանելի վայրերը (այսինքն՝ արոտներ, բլուրներ, հովիտներ, դաշտեր) անձնավորված են և ուրախությամբ աղաղակում (BDB 926, KB 1206, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) և երգում են (BDB 1010, KB 1479, *Qal* ԱՆԿԱՏԱՐ): Այս անշունչ առարկաների փառաբանությունը ինձ հիշեցնում է Հիսուսի քարերի մասին ասված այն խոսքը, որ գրված է Ղուկ. 19:40-ում: Մի օր ամբողջ ստեղծագործությունը (շնչավոր և անշունչ) աղաղակելու են ցնծությամբ իրենց Արարչին (տես՝ Սաղմ. 103:20-22, 145:10, Հռոմ. 8:18-25):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞րն է Սաղմոս 65:1-ում սաղմոսերգուի երդման առարկայի լավագույն տարբերակը:
2. Ինչպե՞ս են արարչագործությունը և «երկրի ծայրերը» կապված իրար:
3. Բացատրե՛ք Սաղմ. 64:3-ի աստվածաբանական նշանակությունը:
4. Ինչպե՞ս են «լեռները» և «ժողովուրդների փոթորկումը» իրար զուգահեռ:
5. Արդյո՞ք Սաղմ. 65:9-13 նկարագրում է ամենամյա իրադարձություն, թե՞ էսկատոլոգիական իրադարձություն է:
6. Ինչպե՞ս է հավասարակշռվում Սաղմ. 65:2,5 և 8-ը Սաղմ. 65:4 համարի հետ: